ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

2 հունիսի 2016 թվականի **թիվ 59** քաղ. Մոսկվա

Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության վարման նպատակներով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվության փոխանակման կարգի մասին

«Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության վարման մասին» արձանագրության 4-րդ կետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 14 հավելված)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ «Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության վարման նպատակներով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվության փոխանակման» կարգը։

2. Ուժը կորցրած ճանաչել՝

«Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության վարման նպատակներով Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների լիազորված մարմինների ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվության փոխանակման կարգի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 270 որոշումը.

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 270 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի փետրվարի 10-ի թիվ 13 որոշումը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 2-ի
թիվ 59 որոշմամբ

ԿԱՐԳ

համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության վարման նպատակներով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվության փոխանակման

1. Սույն կարգը մշակվել է «Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության վարման մասին» արձանագրության 4-րդ կետին («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 14 հավելված) համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված այն մարմինների, որոնք գործառույթներ են իրականացնում տնտեսական, ֆինանսական եւ այլ ոլորտներում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման համար եւ պատասխանատու են տեղեկատվություն ձեւավորելու եւ (կամ) այն Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելու համար, ազգային (կենտրոնական) բանկերի (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետություններ, լիազորված մարմիններ) եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ (այսուհետ՝ Հանձնաժողով) համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության վարման հարցերի շուրջ տեղեկատվության փոխանակման միջոցով արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով եւ սահմանում է լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը։

2. Լիազորված մարմինները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, Հանձնաժողով են ներկայացնում հետեւյալ տեղեկատվությունը, նյութերը եւ փաստաթղթերը՝

ա) անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշները (ներկայացվում են «Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման եւ տարածման կարգի մասին» արձանագրությանը համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 4 հավելված)).

տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշները.

պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի տարեկան պակասուրդը (տոկոսներով՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ).

պետական կառավարման հատվածի պարտքը (տոկոսներով՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ).

գնաճի մակարդակը (սպառողական գների ինդեքսը)՝ տարեկան արտահայտությամբ (դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ տոկոսներով).

տնտեսության զարգացման մակարդակը եւ դինամիկան որոշող մակրոտնտեսական ցուցանիշները.

համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը (նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոսներով) (հաշվարկվում է որպես համախառն ներքին արդյունքի ծավալի ֆիզիկական ինդեքս).

վճարային հաշվեկշռի ընթացիկ գործառնությունների հաշվի մնացորդը (ԱՄՆ դոլարով եւ համախառն ներքին արդյունքի տոկոսներով).

ազգային արժույթի իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը (Բելառուսի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար՝ ազգային արժույթի

իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը) (միջին տարեկան կտրվածքով եւ դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ տոկոսներով).

ինտեգրման աստիճանը որոշող մակրոտնտեսական ցուցանիշները.

յուրաքանչյուր անդամ պետության տնտեսությանն ուղղված ազգային ներդրումների, այդ թվում՝ ուղղակի ներդրումների ծավալը (ԱՄՆ դոլարով).

յուրաքանչյուր անդամ պետության կողմից ազգային տնտեսությունում կատարված ներդրումների, այդ թվում՝ ուղղակի ներդրումների ծավալը (ԱՄՆ դոլարով).

բ) միջնաժամկետ ժամանակահատվածի համար սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումները (ծրագրերը) (ներկայացվում են ամեն տարի), այդ թվում՝

սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումների մշակման առաջին փուլի նյութերը (Հայաստանի Հանրապետության համար՝ միջնաժամկետ կտրվածքով սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսման նախագիծը, Բելառուսի Հանրապետության համար՝ կարճաժամկետ կտրվածքով սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսման նախագիծը, Ղազախստանի Հանրապետության համար՝ 5-ամյա ժամանակահատվածի կտրվածքով սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսման նախագիծը, Ղրղզստանի Հանրապետության համար՝ 3-ամյա ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսման մշակման համար սցենարային մակրոտնտեսական պայմանները, Ռուսաստանի Դաշնության համար՝ տնտեսության գործունեության սցենարային պայմանները եւ սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսման հիմնական պարամետրերը հերթական ֆինանսական տարվա ու պլանային ժամանակահատվածի կտրվածքով) (ներկայացվում են դրանց հաստատման (հավանության) օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում).

սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումների մշակման երկրորդ փուլի նյութերը (Հայաստանի Հանրապետության համար՝ հերթական

ֆինանսական տարվա համար սոցիալ–տնտեսական զարգացման կանխատեսում, Բելառուսի Հանրապետության համար՝ կարճաժամկետ կտրվածքով սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսում, Ղազախստանի Հանրապետության համար՝ 5-ամյա ժամանակահատվածի կտրվածքով սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսում, Ղրղզստանի Հանրապետության համար՝ 3-ամյա ժամանակահատվածի կտրվածքով սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսում, ներառյալ՝ առաջիկա ֆինանսական տարվա կանխատեսումը, Ռուսաստանի Դաշնության համար՝ հերթական ֆինանսական տարվա եւ պլանային ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսում) (ներկայացվում են դրանց հաստատման (հավանության) օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում).

գ) սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ (5 տարին գերազանցող) ծրագրերը (պլաններ, ռազմավարություններ, հայեցակարգեր), տնտեսական զարգացման եւ մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում գործողությունների պլանները (հայեցակարգեր, ռազմավարություններ) (ներկայացվում են դրանց հաստատման (հավանության, ընդունման) օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում).

դ) մակրոտնտեսական, բյուջետային, հարկային եւ դրամավարկային քաղաքականության մշակման եւ իրագործման ոլորտում հիմնական նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաեւ տնտեսական իրավիճակի կայունացմանը եւ տնտեսական զարգացման կայունությանն ուղղված նորմատիվ իրավական ակտերը (ներկայացվում են դրանց հաստատման (հավանության, ընդունման) օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում).

ե) այլ տեղեկատվություն (ըստ Հանձնաժողովի հարցումների՝ ներկայացվում են մեկանգամյա կամ պարբերական հիմքով)։

3. Սույն կարգի 2-րդ կետում չնշված՝ անդամ պետությունների տնտեսության զարգացման մակարդակի ու դինամիկայի ցուցանիշների եւ ինտեգրման աստիճանի ցուցանիշների դիտանցում անցկացնելու համար Հանձնաժողովը՝

ա) ձեւավորում է բնակչության մեկ շնչին, ըստ գնողունակության պարիտետի (ԱՄՆ դոլարով), ընկնող համախառն ներքին արդյունքի մասին տեղեկատվություն (Ռուսաստանի Դաշնության համար՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում (այսուհետ՝ «Ինտերնետ» ցանց)՝ Պետական վիճակագրության դաշնային ծառայության պաշտոնական կայքում հրապարակված եւ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հետ համաձայնեցված տվյալների հիման վրա, այլ անդամ պետությունների համար՝ Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա, ինչպես նաեւ ԱՊՀ-ՏՀԶԿ միջազգային համադրումների հիման վրա).

բ) հաշվարկում է յուրաքանչյուր անդամ պետության մասնաբաժինը՝ արտահանման, ներմուծման եւ արտաքին առեւտրի շրջանառության ընդհանուր ծավալում (տոկոսներով)։

4. Լիազորված մարմիններն ինքնուրույն որոշում են սույն կարգի 2-րդ կետի «գ» եւ «դ» ենթակետերին համապատասխան տրամադրվող տեղեկատվության, նյութերի եւ փաստաթղթերի կազմը։

Սույն կարգի 2-րդ կետի «բ»–«ե» ենթակետերում նշված տեղեկատվությունը, նյութերը եւ փաստաթղթերն ուղարկվում են Հանձնաժողովի Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտի էլեկտրոնային փոստի հասցեին (dmp@eecommission.org)։ Եթե տվյալ տեղեկատվությունն անդամ պետության կողմից բաց հասանելիությամբ տեղադրված է Ինտերնետ ցանցում՝ լիազորված մարմինների պաշտոնական կայքերում, ապա այդ տեղեկատվության փոխարեն կարող է նշվել համապատասխան աղբյուրի հղումը։

5. Հանձնաժողովը, այդ թվում սույն կարգի 2-րդ կետին համապատասխան ստացված տեղեկատվության, նյութերի եւ փաստաթղթերի հիման վրա, պատրաստում է՝

ա) անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման վերլուծության մասին տեղեկատվություն (յուրաքանչյուր եռամսյակ՝ համապատասխան տեղեկատվությունը ստանալու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում).

բ) մակրոտնտեսական այն ցուցանիշների դիտանցման արդյունքների մասին տեղեկատվություն, որոնցով որոշվում է անդամ պետությունների տնտեսական զարգացման կայունությունը (յուրաքանչյուր եռամսյակ՝ համապատասխան տեղեկատվությունը ստանալու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում).

գ) անդամ պետությունների կողմից մակրոտնտեսական այն ցուցանիշները պահպանելու դիտացման արդյունքների վերլուծական ակնարկ, որոնցով որոշվում է տնտեսական զարգացման կայունությունը, եւ անդամ պետությունների տնտեսական իրավիճակի բարելավմանն ու տնտեսական զարգացման կայունության բարձրացմանն ուղղված առաջարկություններ (ամենամյա՝ մինչեւ ապրիլի 1-ը).

դ) անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքների ու հեռանկարների եւ մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում անդամ պետությունների կողմից ձեռնարկած միջոցների մասին զեկույց (ամենամյա՝ մինչեւ ապրիլի 1-ը).

ե) ցուցումներ, որոնք ուղղված են տնտեսական իրավիճակի կայունացմանն այն դեպքում, եթե անդամ պետությունները կգերազանցեն մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքները, որոնցով որոշվում է տնտեսական զարգացման կայունությունը՝ «Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն վարելու մասին» արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 14-րդ հավելված).

զ) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 28 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների» իրականացման ընթացքի մասին զեկույց (2 տարին 1 անգամ).

է) անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները (ամենամյա).

ը) անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների իրագործման մասին նախորդ տարվա հաշվետվություն (ամենամյա).

թ) անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների իրագործման միջոցառումների ցանկ (ամենամյա).

ժ) այլ փաստաթղթեր եւ նյութեր:

6. Հանձնաժողովի կողմից սույն կարգի 5-րդ կետին համապատասխան պատրաստված տեղեկատվությունը, նյութերը եւ փաստաթղթերը բաց հասանելիությամբ տեղադրվում են Ինտերնետ ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում (այն տեղեկատվության, նյութերի եւ փաստաթղթերի մասով, որոնք պատրաստված են լիազորված մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության, նյութերի եւ փաստաթղթերի հիման վրա՝ անդամ պետությունների հետ համաձայնությամբ):

7. Հանձնաժողովն անհրաժեշտ կազմակերպական եւ տեխնիկական միջոցներ է ձեռնարկում, որոնք ուղղված են ստացված տեղեկատվության եւ նյութերի նկատմամբ անիրավաչափ հրապարակման, հասանելիության, ոչնչացման, փոփոխման, պատճենման եւ այլ անիրավաչափ գործողությունների բացառմանը, եւ պատասխանատվություն է կրում դրանց պահպանման եւ պաշտպանության համար: